

կայացուէր օտարներու հայեացքին եւ պատուհաններու մռայլ վանդակները ոճը կը ստանային մարդոց հոգիներուն: Երկրորդ պատրանքը, որուն վրայ շահագիտօրէն այնքան մեղան կը սպառեն մեր խմբագիրները Թիֆլիսէն Փարիզ, մեղապարտ ճարտարութեամբ մը, իրարու հանդէպ իրենց ատելութեանց հաշուեյարդարը վերցնելով ցեղային սկզբունքները մինչեւ, դեռ կը մնար ի զօրու զանգուածին հոգիին վրայ: Պահպանողականութիւնն էր ատիկա, ոչ էջմիածնականը, այլ՝ իմաստուն նկատուած այն կրացումը, զոր կարելի կ'ընենք մեր համայնքային (թող ներուի այս բարբարոս բառը) նկարագիրներուն մէջ ամրախարիսխ կծկուելով. եւ այն օրերէն մինչեւ այսօր որոշ դասակարգի մը դրօշը եղաւ:

Ընկեր Մաթիկը, յետոյ, երբ մխրճուէր Փոքր Ասիոյ մը գաղութներուն մէջ, ապշութեամբ պիտի հաստատէր հասարակական դաստիարակութեան ահաւոր պակասը, արդի գաղափարներուն բացարձակ չգոյութիւնը այդ զանգուածներուն մէջ: Մեր՝ արեւմտահայերուս, դէմ իր արհամարհանքը ծագում կ'առնէր այս հաստատումէն: Անիկա ջախջախիչ հեզնութեամբ մը փշրեց իմ վախկոտ փորձը, եօթնասունական թուականներու մեր ազատականութիւնը ենթարկելու իր ուշադրութեան: Խեղճե՛րս: Լրագրի կարկտան յօդուածներով մեր միտքը կը զարդարէի՛նք: Նալպանդեա՞նը: «Հիւսիսափա՞յլ»ը: Այո՛: Անդին «Փռնց» պատուական լրագիրը: Աս չէ՞ր մեր ճիգը: Այդ պատրիարքի վեղարով հովանաւոր ազատութիւնը: Ամէն արեւելահայու նման, ընկեր Մաթիկը մեծ դիւրութեամբ կը մխրճուէր այս տեսութիւններուն, հայեցողութիւններուն, իմացական մունետիկութեանց բաւիղները: Անցեալին վրայ անշամանդաղ ուրացում, այդ ճիգը, ներկային մէջ վիրաւոր էր ու անբաւարար: Հակառակ բոլոր պնդումիս, անիկա չկրցաւ ճշդել իր պահանջները Թիֆլիսէն ու Ժընեւէն, որոնց գործունէութեան դէմ իր ատելութիւնը չվախցաւ տարագելէ: Հիմա միայն կը հասկնամ, թէ որքան նման ենք իրարու, յանուն գա-